ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թ.

№ 14 (1064)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԵՆԱՑՆԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

«Եթե միայն իմանայինք, թե բարությունը, սերը, ներողամտությունը որքա՜ն անհրաժեշտ են մեզ հիմա՝ այս օրերին, երբ վթարված է վստահությունը ու սասանված է հավատը:

Միայն թե հասկանայինք դա ու շարունակեինք ապրել տիեզերական Հոգու արդար օրենքներով»,- ֆեյսբուքյան գրառում է արել հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, բանաստեղծուհի Վեներա Վարդումյանը, մի կին, ով իր ողջ կյանքը Լոռու Ճոճկան գյուղի միջնակարգ դպրոցում նվիրել է սերնդակրթության գործին:

Որովհետև ուսուցիչն է այն զգայուն զարկերակը, որ մշտապես բաբախում է իր երկրի ցավով ու տառապանքով, հաջողություններով ու առաջընթացով: Նա սովորեցնում է, կրթում, դաստիարակում, ուղղորդում…

Խորհում եմ, երանի բոլորը կամ շատերը նրա նման մտածեին ու արտահայտվեին՝ մաքրամաքուր ոսկեղենիկ հայերենով, առանց չարության ու մաղձի, ներսում եղած աղոթքը դիմացինին ուղղված բարեմաղթանքի վերածելով…

Այո, Արցախյան պատերազմն ալեկոծեց բոլորիս հոգիները, խռովքը բույն դրեց մեր սրտերում, ամեն հայ այս օրերին սգում է յուրաքանչյուր որդեկորույս ծնողի հետ և կիսում յուրաքանչյուր վերադարձողի հարազատների երջանկությունը: Այս օրերին լավատեսությունն ասես լքել է բոլորին, և բոլորը փորձում են համատարած տխրության մեջ գտնել լույսի և հույսի բեկորներ՝ դրանցով սփոփելու իրենց ու շրջապատի մարդկանց:

Ստեղծված իրավիճակում գերմարդկային ճիգեր են պետք՝ ազգովի բռունցքվելու, ազգային գաղափարախոսության շուրջ միավորվելու, համազգային ցավը միասին հաղթահարելու և վերակազմակերպվելու համար, որպեսզի Հայաստանի զարգացումն ու առաջընթացը դարձնենք յուրաքանչյուրիս գերխնդիրը: Այս գործընթացների մեջ կրթությունն առաջին գերխնդիրն է, առաջին նպատակը, որը երկրի զարգացման ու առաջընթացի կարևոր և ամենահուսալի գրավականն է:

Սիրելի գործընկերներ, դասախոսներ և ուսանողներ, թոթափելով անցնող տարվա արհավիրքները, 2021 թվականի շեմին ոտք դնենք լավատեսությամբ, ջերմությամբ, իրար օգնելու պատրաստակամությամբ և անպայման Հայաստանի զարգացմանն ու շենացմանը նպաստելու մեծ վճռականությամբ:

Թող որ միայն բարությունն ու խաղաղությունն ուղեկցեն հայ ընտանիքներին, և գուցե մի օր աշխարհը ևս միանա խաղաղասիրության մեր ձգտումին և ընդվզի պատերազմի հրձիգների դեմ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ռափայել ՊԱՏԿԱՆՅԱՆ

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերուն.
Չարը կորչեր, ու բարին
Բուն դներ մեր սրտերուն:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Ազատ շնչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլեին արտ-անդաստան:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Ոտքի կանգներ Հայաստան,
Եվ կիսաքանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ոստան:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Հայ ազգ ի մի գումարվեր,
Ի գլուխ Կարնո հայ ամրին,
Հայի դրոշակ ծածաներ:

Հայե՞ր, երբեք չերկմտենք,
Կկատարվի այդ ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սրտեն:

ԱՊՀ մանկավարժական բուհերի հանրային խորհրդի տեսակոնֆերանսը

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը դեկտեմբերի 18-ին մասնակցեց ԱՊՀ մանկավարժական բուհերի հանրային խորհրդի հերթական տեսակոնֆերանսին: Կոնֆերանսը վարում էր ԱՊՀ մանկավարժական բուհերի հանրային խորհրդի նախագահ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ալեքսեյ Լուբկովը:

➤2

ՏԱՐԵՎԵՐՋԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից գործող Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցան ամփոփիչ բաց դասեր, որոնք նվիրված էին դպրոցի ուսումնական պատմության մեջ XXXIII նոր տարվան՝ 2021 թվականին:

Դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը հանդես եկավ բացման խոսքով՝ մաղթելով մայր հայրենիքին խաղաղություն, բարօրություն և առաջընթաց, ապա անդրադարձավ նաև դեկտեմբերի 11-ին՝ «Հայոց վայելչագրության արվեստի օրվան»: Այն 2019 թվականից, ի հպարտություն հայ ազգի, ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պատվավոր ցանկում: Այդ օրը կարևոր է նաև «Վերածնունդ» հայկական դպրոցի համար, որն արդեն երեսուներեք տարի շարունակ ստանձնել է հայեցի կրթության իր առաքելությունը հայրենիքից դուրս՝ Մոսկվայում: Չէ՞ որ հայոց գրի ու խոսքի շնորհիվ է հարատևում հայ ազգն, ու պիտի հարատևեն ապագա հայ սերունդները:

Դպրոցի սաները Ամանորին նվիրված հայրենասիրական ոգով բանաստեղծություններ, երգեր ու պարեր ներկայացրին կրթօջախում հյուրընկալված Ձմեռ պապին ու Ձյունանուշին:

ԱՊՀ մանկավարժական բուհերի հանրային խորհրդի տեսակոնֆերանսը

➤1 Խորհրդի անդամ երկրների ռեկտորները կարևորեցին արդեն ավանդական դարձած տեսակապի միջոցով կոնֆերանսի անցկացումը, ինչը հնարավորություն է տալիս քննարկել և առաջարկել տեղում առաջացած խնդիրների լուծումներ:

Նիստի օրակարգում էին մի շարք հարցեր, որոնք կապված էին հիմնականում նախորդ նիստերի ընթացքում կայացված որոշումների իրականացման, շարունակական մանկավարժական կրթության, ոլորտի երիտասարդ գիտնականների գիտաժողովի անցկացման, ինչպես նաև հաջորդ տարվա Խորհրդի գործունեության պլանի հաստատման հետ:

Խորհրդի աշխատանքներին մասնակցում էին ՌԴ Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի, Մոլդովայի Հանրապետության Սլավոնական համալսարանի, Ղազախստանի Աբայի անվան ազգային մանկավարժական համալսարանի, ինչպես նաև ԱՊՀ երկրները ներկայացնող մանկավարժական մի շարք այլ բուհերի ռեկտորներ:

Տեսակոնֆերանսի ընթացքում Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ևս ողջունեց գործընկերներին և վստահեցրեց, որ բուհը շարունակելու է իրականացնել ԱՊՀ երկրների և հատկապես ՌԴ մանկավարժական բուհերի հետ համագործակցության շրջանակներն ընդլայնելու քաղաքականությունը:

Գործընկեր բուհերի միջև համագործակցությունն ամրապնդելու նպատակով առաջարկվեց կազմակերպել սեմինարներ, վերապատրաստումներ, փորձի փոխանակումներ և այլ միջոցառումներ: Խորհրդի նիստում քննարկվեց և ընդունվեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի՝ որպես ԱՊՀ երկրներում մանկավարժական կադրեր պատրաստող բազային կազմակերպության ծրագիրը:

Խորհրդի որոշմամբ միջազգային ֆորումի անցկացման ժամկետ նախանշվեց 2021 թվականի մայիսը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԵՐԲԵՐԵՆ

Հայաստանում Սերբիայի Հանրապետության հյուպատոսության և բելգրադյան «Պեշիչ ի սինովի» հրատարակչատան նախաձեռնությամբ ու համագործակցությամբ, օրերս Բելգրադում առաջին անգամ թարգմանաբար լույս է տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մեծարժեք աշխատությունը:

Գրքի սերբերեն թարգմանությունն առաջին փորձն է, որի նպատակն է մեզ բախտակից սերբ ընթերցողին ավելի մոտեցնել հայոց պատմությանը: Գրքի խմբագիրը և առաջաբանի հեղինակը ճանաչված գրող, թարգմանիչ, սերբագետ Բաբկեն Սիմոնյանն է, ով ավելի քան չորս տասնամյակ զբաղվում է հայ-սերբական գրական ու մշակութային կապերով:

- Ինչպե՞ս ծնունդ առավ գիրքը սերբերեն թարգմանելու գաղափարը:

- Տարիներ առաջ մասնակցում էի Բելգրադում ավանդաբար անցկացվող գրքի միջազգային տոնավաճառին, ուր ծանոթացա «Պեշիչ ի սինովի» հրատարակչատան տնօրեն, տիկին Վեսնա Պեշիչի հետ,– պատմում է Բաբկեն Սիմոնյանը:- Մինչ այդ, հայ գրականությունը և մշակույթը Սերբիայում բազմիցս ներկայացնելու առիթներ եմ ունեցել, բայց Վեսնա Պեշիչի հետ հանդիպումով հրատարակչական համագործակցության նոր հնարավորություններ և ուղիներ բացվեցին: Նա ասաց, որ շատ է ոգևորված Հայաստանով և ցանկանում է հրատարակել Խորենացու «Հայոց պատմությունը», որի մասին լսել է հորից՝ պալեո-լեզվաբան Ռադիվոյե Պեշիչից: Երբ հարցրի, թե ի՞նչը շարժառիթ եղավ իրականացնելու այդ մտահղացումը, նա հստակ պատասխանեց, որ իր հրատարակչատունը հստակ քաղաքականություն ունի, որի առանցքը աշխարհի հին քաղաքակրթությունները, ինչպես նաև մոռացված վերացված մշակույթները սերբ ընթերցողներին ներկայացնելն է: Հաճույքով լսեցի նրա պատմությունները, նրա խոսքը մեկեն գրավեց ուշադրությունս: Տիկին Պեշիչն առաջարկեց ինձ խմբագրել Խորենացու «Հայոց պատմության» սերբերեն թարգմանությունը և միաժամանակ առաջաբան գրել: Սիրով ընդունեցի առաջարկը՝ տեղեկացնելով, սակայն, որ դա շատ պատասխանատու և աշխատատար գործ է և բավականին ժամանակ է պահանջվում գիրքը արժանապատվորեն ներկայացնելու համար:

Անցած երեք տարիների ընթացքում հսկայական աշխատանք է կատարվել: Գիրքը թարգմանվել է ռուսերենից, որը 1990 թվականին լույս է ընծայել «Հայաստան» հրատարակչությունը (գրաբարից ռուսերեն թարգմանել է ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը): Խմբագրական աշխատանքի ընթացքում ռուսերեն թարգմանությունից զատ, համեմատական հսկայական աշխատանք է կատարվել՝ հիմք ընդունելով նաև հայերեն բնագիրը, քանի որ հայկական անվանումներն ու տեղանունները ճիշտ տառադարձմամբ ներկայացնելու խնդիր կար: Ցավով պիտի նշել, որ ժամանակին սերբ որոշ հրատարակիչներ ու հեղինակներ ուշադրություն չեն դարձրել հայկական անուններին, որոնք լույս են տեսել մի շարք սխալներով: Այդ առումով, խմբագիրն ամենայն պատասխանատվությամբ է անդրադարձել սերբերենով ներկայացվող հայկական անուններին: Խոսքը, անշուշտ, միայն հայկական անուններին չէ, որ վերաբերում է: Հայերեն բնագրի հետ համեմատելիս խմբագիրը ջանացել է, որ սերբերեն թարգմանությունը լիովին արտահայտի Խորենացու աշխատության ոգին:

Խորենացու և նրա աշխատության մասին պատմական ակնարկ է գրել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը: Իր ակնարկում նա ներկայացրել է Խորենացու աշխատության առանցքային նշանակությունը, որը որպես սկզբնաղբյուր, մեր գոյության թերևս ամենաարժանահավատ վկայագիրն է: Նա գրում է, որ «Հայոց պատմությունը» համամարդկային արժեք է ներկայացնում այն առումով, որ նրանում հետաքրքիր տեղեկություններ կան Հռոմի, Հունաստանի, Պարսկաստանի, Եգիպտոսի, Բալկանյան երկրների ու նրանց ժողովուրդների, ինչպես նաև Վրաստանի ու Աղվանքի մասին:

Բաբկեն Սիմոնյանը գրքի լույսընծայմանը ներգրավել է նաև ԵՊՀ պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, քարտեզագետ Գեղամ Բադալյանին և ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի՝ ազգությամբ սերբ ուսանող Պրեդրագ Միյանովիչին, որն անցած չորս տարիներին հասցրել է ուսումնասիրել հայերեն, գրաբար, հայ եկեղեցու պատմություն:

Սերբ ընթերցողի սեղանին դրված «Հայոց պատմությունը» լույս է տեսել ճիշտ ժամանակին՝ ողողված աշխարհաքաղաքական բարդ խմորումներով ու պատերազմներով, երբ անհայրենիք ու քոչվոր ցեղերը կրկին փորձում են բախել մեր հայրենիքի դուռը, իրենց վերագրել հայ ժողովրդի պատմական տարածքները և մշակութային ժառանգությունը: Այդ առումով՝ Խորենացու «Հայոց պատմությունը» հակամարտություններով ու պատերազմներով շաղախված մեր օրերում հույսի ու հարատևման մի շող է սփռում, որով պիտի շարունակենք մեր երթը և կերտենք մեր վաղվա Հայաստանը:

Գրքում ներկայացված են հինգերորդ դարի պատմական անցուդարձերը բնորոշող պատկերազարդումներ, ինչպես նաև Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», որը սերբ ընթերցողին հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացնել մեր հայրենիքի սահմանները:



Խորենացու «Հայոց պատմությունը», անշուշտ, Հայաստանը և Սերբիան միմյանց կապող մի նոր կամուրջ է, որն ավելի կմերձեցնի երկու բախտակից ժողովուրդներին: Սա լավ նվեր է նաև սերբահայերին, որոնք, ցավոք, չեն տիրապետում հայերենին և որոնց նախնիները Սերբիա են փոխադրվել 1915 թվականի Հայոց մեծ եղեռնից հետո:

Ավելացնենք, որ Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը նախկինում թարգմանվել է նաև ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն, պարսկերեն, անգլերեն, վրացերեն, արաբերեն և թուրքերեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Սրբուհի Լուլուկյանը միջազգային համագործակցության բաժնի հետ համատեղ հանդիպեց Օտար լեզուների ֆակուլտետի Գերմաներեն լեզու և գրականություն մասնագիտության բակալավր առաջին կուրսի օտարերկրյա ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ուսանողներին հուզող հարցերը, առաջացած խնդիրները և հետագա ուսումնական գործընթացը բարելավելու համար ֆակուլտետի կողմից առաջարկություններ ներկայացվեցին ուսանողներին:

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՓԱԿԵԼ ԱՆՑՆՈՂ ՏԱՐՎԱ ԱՆԳՈՒՅՆ ԷՋԸ

Կյանքն անցնում է... առանց մի պահ կանգ առնելու գնում է ժամանակը, չի էլ հարցնում՝ ուզո՞ւմ ենք անցնի այս պահը, թե՞ ուզում ենք ծուլվել ու մնալ այս պահի մեջ:

Բայց մենք ստիպված ենք ամեն վայրկյանի հետ լինել, ապրել ամեն վայրկյանով, որովհետև հետո կարող է ուշ լինել, հետո կարող է էլ «հետոն» չլինել… Ու անցավ, այս տարին էլ անցավ ու քիչ է մնում, որ վերջապես հրաժեշտ տանք այս երկար սպասված, բայց մեզ՝ հայերիս անսահման ցավ տված տարվան... Այո՛, երկար սպասված…

Երբ փոքր էի, դասընկերներիս հետ ամեն օր գրատախտակին գրում էինք. «2020 թվականը մերն է, այդ տարին ամենասիրո՛ւնն է, մենք դպրոցը կավարտենք սիրուն ու չկրկնվող տարեթվով», բայց հիմա հասկանում ենք, որ պետք չէ ապագայի հանդեպ այդքան վստահ լինել՝ առանց իմանալու՝ վաղվա օրը ինչ կբերի…

Այնքան դժվար է այսօր ոտքի կանգնել ընկած տեղից, երբ մի պահ ետ ես նայում ու տեսնում ես, որ քո ամենասպասված տարին այնքան էլ քեզ չտվեց այն, ինչ երազում էիր կամ ինչ պատկերացնում էիր քո սրտի փոքրիկ անկյունում…

Իրականում ցավը խո՛րն է, մե՛ծ, ու ինձ համար արդեն ցավալի չէ այն չարաբաստիկ ախտը, որ տարածվել է ողջ աշխարհում, այլ այն, որ այդ ախտը մե՛ր հոգում է... Այն է ցավալի, որ կորցրեցի... պատերազմը խլեց...

Սկզբում թվում էր, թե էլ հույս չկա, որ էլ չկա ապրելու որևէ հույսի նշույլ, որովհետև կորուստդ մեծ է, դառը... բայց երբ հիշում ես, որ դու մեծ առաքելություն ունես, որ քո կյանքն էլ անիմաստ չպիտի լինի, որովհետև շատ կիսատ գործեր կան, որ մե՛նք՝ ապրողներս, պիտի ավարտին հասցնենք, ուզում ես վազել դեպի վաղվա օրը, դեպի քո հեքիաթային ու քո՛ պատկերացրած ապագան...

Իրականում արդեն ես էլ եմ սպասում հաջորդ տարվան, որովհետև երազանքներ կան, որ սպասում են իրագործվելուն: Ուզում եմ փակել այս տարվա անգույն կամ միագույն էջը ու բացել 2021 թվականի գիրքը՝ էջերը՝ լուսավո՛ր ու փառահե՛ղ, որտեղ կգտնեմ իմը…

Մենք ապագա ունենք, մենք չե՛նք խոնարհվի, թող չհոխորտա թշնամին. ինչքան էլ փորձի կոտրել մեզ, մենք կմնանք կանգուն, ինչպես «ժայռից կաթող մասուրը», որը ոչ մի փոթորկի չհանձնվեց, որովհետև մենք քրիստոնյա ազգ ենք, ունենք հույս, ունենք Աստված...

Ես հպարտ եմ, որ հայուհի եմ, որ ապագա մանկավարժ եմ ու ոմանց նման չեմ ամաչելու՝ նայել աշակերտներիս աչքերի մեջ:

Ու պետք է միշտ հիշել ու ասել. «Վաղը նորի՛ց արև կծագի»…

Կծագի արևը՝ ուժի, օգնության, մխիթարության ու լույսի արևը ... ընկճվել ու վհատվել չկա՛, մեր ապագան վառ է ու վառ է մե՛ր իսկ ձեռքերում:

Աննա ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 1-ին կուրս

Ես վերջինն եմ քո ճանապարհին

Տիեզերական մի մարմին (ի՞նչ անուն տամ նրան) դանդա՜ղ, լո՜ւռ պտտվում է պատուհանից այն կողմ: Չգիտեմ ինչու: Ու պատերը պատմում են սիրո այն երգը, որ հորդահոս սահում է գիշերներիս մեջ: Նրա խշշոցի մեջ լսում եմ Պոլ Էլյուարի.

Ես վերջինն եմ քո ճանապարհին
Վերջին գարունը վերջին ձյունը
Վերջին ճակատամարտը հանուն չմեռնելու

Եվ ահա ավելի ցածր ու ավելի բարձր ենք ինչպես երբևէ:

Ինչպե՛ս երբևէ: Գտել եմ գրականության դասին ու հանկարծ հասկացել, որ այստեղ էլ կարևորը հոգու կանչն է, որը գուցե թե ունի սյուժե, զարգացում, ավարտ ունի: Ապրեցնող ուժ ունի ինքը ու հանկարծ ուրվագծում է երկու կետ, ապրելու երկու եղանակ, որոնցից մեկում դու ես, երկրորդում՝ էլի դու, այսինքն՝ գիրքը:

Ու ակամայից մի հարց է առաջանում՝ ինչո՞ւ:

Հանկարծ հիշում եմ, որ տարին տարավ Նրանց, բայց Նրանք չտարան տարին: Ու ինքնաբուխ մի հարվածով ծանրաքարը ընկնում է գլխիս, մտքիս, ողնաշարիս: Հիմա սկսվում է որոնումը: Այդպես եմ ասում այն օրերին, երբ մարդը, կանգնած փողոցի կենտրոնում, ինքն ու ինքը, ծանրաքայլ մտորում է այն հարցի մասին, որին երևի Շեքսպիրի հերոսը ասեր՝ լինե՞լ, թե՞ չլինել: Եվ հետո զգալ, շշուկով ու ինքդ քո մեջ ներաճած հասկանալ, որ ապրելու այն դասական բանաձևը, թե Բարձրյալը տեսնում է, լսում ու ուղարկում պատասխան, մի տեսակ մնում է կաղապարի մեջ... նրանից դուրս՝ հավատ առ Ես:

Եվ բանասիրականի չորրորդ կուրսը, այստեղ «ապրած» չորս տարիները ձևավորեցին այդ հավատը դեպի ինձ, հետևաբար՝ նաև դեպի հայրենիքը: Դասախոսներ ունեցա, որ մտավորականի զուսպ կեցվածքի մեջ միաժամանակ հրաշալի մայրեր, հայրեր ու ինքնատիպ անհատներ լինելով՝ ինձ տվեցին ազգին, հայրենիքին նվիրվելու բողբոջներ, ու ես էլ հասկացա, որ ամեն մարդ մի ձևով է ծառայում հայրենիքին՝ մեկը կռվում է խրամատում ու հերոսաբար ընկնում, մյուսը թիկունք է կազմում, ամուր թիկունք, մեկ ուրիշը կրթում է խոնարհաբար, մյուսը հայրաբար ուժ է տալիս կամ մայրաբար բարձրացնում ընկնողին: Եվ այսպիսով ծառայում են: Ու սա մի կատարյալ «ծառայություն է», որի մասին պարտք ունենք խոսելու: Եվ բանասիրականի չորրորդ կուրսը, այստեղ «ապրած» իմ չորս տարիները լինելության բացառիկ խորհրդով ձևավորեցին մտածելու և դատելու այն բոլոր կերպերը, որոնք տանում են դեպի ինքնազարգացման, որոնք տանում են դեպի կայացման ու հասունացման: Ո՞նց չասեմ, որ նույնիսկ ամենամութ գիշերվան հաջորդում է լույսը: Ու այդ ժամանակ է, թերևս, որ հասկանում ես՝ ամենամեծ հաղթանակները սկսվում են միայն այն բանից հետո, երբ հաղթում ես ինքդ քեզ: Ի՛նքդ քեզ: Չէ՛, չես հաղթահարում ինքդ քեզ, հաղթում ես: Հե՛նց այդպես:

Քննությունների շաբաթ, քննին դատողությունների ամիս ու անքուն ամիսներ… Գիտես, որ պիտի ապրես, բայց այլևս չգիտես՝ ինչո՞ւ և ո՞ւմ համար: Ու մինչ փորձում ես դա հասկանալ, ներհայեցողությունը տեղի է տալիս և...

Երգ է հնչում Հրապարակում...



Գյուղս սգում է...
Երիտասարդները երգում են այդ երգը...
Գյուղս սգում է...
Գոռում են, ճչում են...
Գյուղս, տունս սգում է...

Ներեք մեզ. մեղավոր ենք, որ ապրում ենք Ձեր փոխարեն:

Կարլեն ՆԱՁԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս

ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ՝ ԴԵՊԻ 2021

Քննությունների մասին մտածելով՝ թերթում եմ մեր անցած թեմաները: Հանկարծ օրացույցին եմ նայում: Չեմ հավատում աչքերիս: Մի՞թե արդեն եկել է ցրտաշունչ դեկտեմբերը: Ախր ասես երեկ լիներ, երբ միասնական քննությունները հանձնեցի ու իմացա, որ ընդունվել եմ իմ երազանքների համալսարանը:

Հիշում եմ՝ ինչպես սեպտեմբերին մեզ գրկաբաց դիմավորեցին այստեղ: Հիմա արդեն հարազատ տան պես է ՀՊՄՀ-ն: Շատերը քմծիծաղ կտան ու կասեն. «Բայց դու մի քանի անգամ ես ընդամենը ոտք դրել համալսարան, ինչպե՞ս կարող ես հարազատ համարել այն»:

Ես էլի մտքերի գիրկն եմ ընկնում: Ուզում եմ հիշել չգնալու պատճառը: Հիշում եմ ու տխրում. 2020 թվականը մռայլ դեմքով մտավ մեր կյանք: Հետո հիշում եմ, որ շուտով նա կգնա ու տեղը կզիջի 2021-ին: Մտածում եմ Ամանորի մասին: Չգիտես ինչու, չի ստացվում լիովին մտածել ու մտքերս կտրվում են պատերազմը հիշելով: Էլի հետ եմ գնում մտքերով:

Ամռանը ես շատ էի ուզում գնալ Տավուշի մարզի Այգեձոր գյուղ: Չգնացի: Հետո ավելի դաժան պատերազմ սկսվեց…ավելի մռայլ էջեր ունեցող:

Հանկարծ մտքերս տանում են ինձ հեռավոր ապագա: Այնտեղ ես ուսուցիչ եմ և ունեմ աշակերտներ, ովքեր շուտով բանակ պետք է գնան: Նրանք եկել են ինձ հրաժեշտ տալու: Ես լավագույն բարեմաղթանքներով ճանապարհում եմ նրանց՝ հայրենիքի պարտքը տալու:

Մտքերս նորից վերադառնում են ներկա: Սկսում եմ մտածել հավատի մասին: Ես միշտ ասել եմ ինքս ինձ, որ հավատն անհնարինը հնարավոր է դարձնում, ու եթե նայենք մի սովորական թղթի ու հավատանք, որ այն կշարժվի՝այդպես էլ կլինի:

Ժպտում եմ, որովհետև հիշում եմ, որ ՀՊՄՀ-ն բացի գիտելիքներից, նաև լավ ընկերներ է տվել, ովքեր ինձ պես լավատես են: Մենք ամուր ենք, ու որքան էլ կյանքը մեզ փորձի ծնկի բերել, ի հեճուկս նրա՝ ոտքի կկանգնենք: Եվ վերջում. երբեք չկարծեք այսպես. «Աքաղաղներն անգամ գիտեն, որ լուսաբացը հեռու չէ: Իսկ ես մարդ տեղովս հուսահատվել եմ»:

Թագուհի Աղասյան
Բանասիրական ֆակուլտետ, 1-ին կուրս

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Ես լռել եմ հիմա, խոնարհվել եմ հլու-
Սի՜րտս գիտե միայն՝ արշալույս է գալու:
Սիրտս գիտե հիմա՝ պիտի իջնի գիշեր,
Պիտի մեռնի, մարի ամեն կարոտ ու սեր:
Մութը պիտի իջնի ու աշխարհը այս հին
Պիտի ցնո՜ղք դառնա, պիտի գգվի մահին:
Պիտի ցնդի, մարի, որպես հեռու մի հուշ-
Մինչև կարմիր վառվի արշալույսը անուշ:
Մինչև վառվի մուժում արևը հուր, հզոր-
Ու նո՛ր փայլով խնդա հորիզոնը բոսոր:
Սիրտս գիտե հիմա, որ արևը մեր այս-
Փայլ է ուրի՛շ կյանքի, ուրիշ կյանքի երազ:
Պիտի իջնի, մարի երկինքներում բոսոր-
Որ արթնանա նորից՝ հեռավոր ու հզոր:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Խիղճդ մեռնի, աշխա՛րհ, մուխդ մարի,
Միջակություններդ մեծաբերան
Պատառ-պատառ արին հոգիս, կերան
Ու չհանգստացան այսքան տարի...
Ասա, նվաստդ ի՞նչ հնար ճարի,
Որ ինքն իրեն այսքան չչարչարի:
Ասա, ինչպե՞ս վարվի, ի՞նչ անի նա,
Նրանց ձեռից գլուխն առնի, գնա՞:
Գնա որտե՞ղ փնտրի փրկության ափ...
Երբ որ դու չես տվել նրանց՝ աղոտ
Մի շնորհքի նշխար, մի բուռ ամոթ,
Ախորժակ ես տվել աշխարհի չափ
Ու բաց թողել վրաս այսքան տարի...
Խիղճդ մեռնի, աշխա՛րհ, մուխդ մարի...

«ՄԵՆՔ՝ ԱՅՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՍ, ՉՊԵՏՔ Է ԹՈՒՅԼ ՏԱՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԱՅՍ ՍԵՐՆԴԻ ՀԱՄԱՐ ԴԱՌՆԱՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ»

ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԸ ԱՍՏԾՈ ԵՐԿՐԱՅԻՆ ԲԱՆԱԿՆ Է ՏԻԵԶԵՐՔՈՒՄ...

Այս ապուշներն անգամ Աստծո հետ հաշտ չեն:

Սրանք ուզում են մի երկիր վերացնել, որն Աստվածային արարման նախահիմքն է, արմատը, ամբողջ արարչականության լույսն է՝ հեռուներ գնացող:

Ինձ միշտ թվացել է, որ առանց Հայաստան՝ մոլորակի պտույտները մարդկության համար կավարտվեն: Գլոբալիստները կջախջախեն դարերով ստեղծված ազգային մշակույթներն՝ իրենց համամարդկային արժեքներով, ու կյանքն այլևս հետաքրքիր չի լինի: Այս ապուշներն անգամ Աստծո հետ հաշտ չեն:

ԲԱՅՑ ԻՄԱՑԵՔ՝ ՀԱՅ ԱԶԳԸ ԱՍՏԾՈ ԵՐԿՐԱՅԻՆ ԲԱՆԱԿՆ Է ՏԻԵԶԵՐՔՈՒՄ...

ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
7 հոկտեմբեր, 2020 թ.

Թշնամիդ թուրքն է աղճատված հոգով,
Չունի պատմություն և հերոսության որևէ դրվագ,
Նա միշտ եղել է կեղծ ու խաբեբա,
Հուդայի նման քեզ համբուրելով միշտ դավաճանել:
Ընտրած հարվածը միշտ թիկունքից է,
Չէ՞ որ դեմ առ դեմ նա վախենում է նայել աչքերիդ,
Աչքերի խորքում բութ չարությունն է:
Մի՛ պարզիր նրան քո ձեռքը մաքուր,
Նրա ձեռքերը միշտ արյունոտ են
Սպանված անմեղ մարդկանց արյունով,
Որովհետև նա չունի արյան կանչ,
Որովհետև նա նստած է հիմա արյունով օծված հայոց հողերին,
Եվ այդ հողերը այրում են նրանց սիրտը և հոգին
Եվ տանում նրանց ավելի ստոր, խեղված քայլերի:
Ձեր հանգրվանը դժոխքն է՝ գիտենք,
Այնտեղ էլ երբեք հանգիստ չեք գտնի,
Չէ՞ որ դժոխքում ձեր նախնիները չեն սպասում ձեզ,
Որովհետև դուք սովոր եք իրար միշտ կոկորդ կրծել
Սոված անգղի պես:
Կյանքի օրենքն է՝ ինչ որ կցանես, այն էլ կհնձես:
Իսկ ձեր ցանածը ձեր չարությունն է՝ արյունով օծված:
Ձեզ սպասում է կաթսան գեհենի,
Որտեղ դուք կեփվեք, սրբապիղծ շներ:



Կարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Երևան քաղաքի գլխավոր թերապևտ

Կամավորականը

Ներկան ու անցյալն առավել իմաստավորվում են, երբ ճանաչում ես մերօրյա հերոսներին, գիտես նրանց անցած մարտական ուղին, իրենց սխրանքների մասին հենց իրենցից ես լսում, ժամերով նստում ես նրանց հետ, ճաշում, տուն գալով փաթաթվում նրանց: Ամեն ինչ այսպես էլ եղավ: Պատերազմ էր: Փոքրիկ գյուղից երկու տասնյակ զինվոր ունեինք, մոտ տասնհինգ էլ պայմանագրային զինծառայող, և նրանց հետ կապված անհանգստություն, տագնապ, անքուն գիշերներ: Լսեցի ոտնաձայներ: Հայրս էր՝ Հրաչիկ Մելսիկի Մաղաքելյանը: Աշխատանքի վայրից եկել էր տուն՝ մեզ հրաժեշտ տալու, քանի որ ինչպես շատերը, հայրս նույնպես շտապում էր կամավորագրվել. «Լաց ու կոծ չլինի, մի՛ անհանգստացեք: Սրանց բերանը պիտի փակվի, թե չէ...»:

Սեպտեմբերի 27-ին՝ երեկոյան, հայրս և մեր գյուղից ավելի քան տասը հոգի, միանալով մարզի բոլոր կամավորներին, շարժվեցին Նոյեմբերյանի զորամաս: Մինչև հոկտեմբերի 14-ը հայրս կամավոր ընկերների հետ եղել է Նոյեմբերյանի դիրքերում: Հոկտեմբերի 14-ին, ինչպես զորամասի շատ տղաներ, հայրս և մեր գյուղի տղաներից երկուսը կամավոր գնացել են Ղարաբաղ: Հայրս կռվել է Մարտակերտում՝ քսանվեց հոգանոց ջոկատի կազմում: Մեծ հաջողություններ են ունեցել: Կարևորը քսանվեց հոգուց ոչ ոք չի զոհվել, միայն վիրավորվել են, առաջին վիրավորն էլ հայրս է եղել, նա վիրավորվել է ոտքից: Երբ ավարտվեց պատերազմը, և հայրս տուն վերադարձավ, սկսեցի հարցուփորձ անել, ինձ ամեն ինչ հետաքրքրում էր, անգամ այն, թե թշնամուց քանի հոգու են ոչնչացրել: Հայրս սկսեց հիշել իր անցած ուղին և պատմեց. <<Վաղ առավոտ էր, տղաներով նստած էինք, ներս մտավ կամանդիրը, նայեց չորս կողմը և ասաց, որ տղաներին պետք է զենք հասցնել, վարորդը չի քշում՝ վախենում է: Անընդհատ ինձ էր նայում, բայց չէր համարձակվում հրաման տալ, քանի որ գիտեր՝ ուր է ուղարկում, որ կարող է էլ հետ չգամ: Չսպասեցի նրա հրամանին, կրկին ինձ նայելուն պես ասացի.

- Քշե՞մ, կամանդի՛ր:
- Եսի՛մ, Հրա՛չ ջան:
- Արխային, կամանդի՛ր, ինձ բան չի լինի, ո՞նց ստեղ հանգիստ նստեմ, իմանալով որ տասնութ տարեկան երեխեքը իմ օգնությանն են սպասում:

Ընկերներիցս մեկը՝ Արտակը, ասաց, որ ինքն էլ է գալիս: Նստեցինք ավտոմեքենան և շարժվեցինք, «սնարյադն» անընդհատ անձրևի նման թափվում էր: Մեկը ավտոմեքենային շատ մոտ խփեց: Արտակին առաջարկեցի երգենք, որպեսզի «սնարյադի» ձայնը չլսվի: Ինչքան մոտ էր խփում «սնարյադը», այնքան ավելի բարձր էինք երգում: Հասանք տեղ, տղերքին ասացի, որ երկու րոպե ժամանակ ունեն զինամթերքը դատարկելու համար: Երկու րոպեից ավտոմեքենայում զենք չկար: Հետ դարձանք: Բարեբախտաբար, ողջ-առողջ տեղ հասանք:

Լսում էի հորս... Սխրանքները հպարտություն էին պարգևում, բայց և խեղդում էր կոկորդս, արտասվում էի: Այս աշունը շատ բան խլեց մեզնից՝ հազարավոր չապրած կյանքեր ու բարի ժպիտներ: Այն տասնվեց տարիներիս աշուններից ամենատարբերվողն էր, որը միշտ հիշելու եմ: Հիշելու եմ ու տարբեր զգացողություններ եմ ունենալու: Ափսոսալու եմ չապրած կյանքերի համար, հպարտանալու՝ նրանց անձնվեր հայրենասիրությամբ:

Հերիք ՄԱՂԱՔԵԼՅԱՆ
Մեծ Այրումի միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան

Հերթը մերն էր

Ժամանակները տարբեր են, պատմությունը՝ նույնը, կրկնվող:

Մարտահրավերների պակաս երբեք չենք ունեցել, թշնամին միշտ էլ սրել է իր յաթաղանը մեր լեռներում: Աշուն էր: Այն հասարակ աշուններից մեկը, որ իր պարզությամբ, բայց և շենշող գույներով լցնում է բոլորի սրտերը: Աշուն, երբ մի տերևի խշշոցը կարող էր անսահման երջանկություն պարգևել փողոցում խաղացող երեխային: Բայց սա խշշոց չէր, սա մահագույժ փամփուշտի սուլոցն էր: «Բարձր ձայն լսվեց, բոլորը շփոթվեցին, որովհետև հանգստի ժամ էր: Տագնապ էր: Զորքը հավաքվել էր շարահրապարակում: Իմացանք, որ պատերազմ է: Անտեղյակ գալիքից՝ ընդունեցինք որպես արկած: Ի՞նչ պետք է իմանար 3 ամիս ծառայած, հազիվ բանակային կյանքին հարմարված զինվորը: Ձենք բռնել նոր էի սովորել»: Որքա՜ն անտեղյակ ու անփորձ, բայց և

ինչքա՜ն մարտական ու հզոր: Հայրենիքն իրենց էր սպասում, վտանգված էր տունը, ընտանիքը, սև ու խելացի աչքերով այն աղջիկն, ում սեր էր խոստացել: Բոլորի սրտում մի սուրբ բառ էր՝ Հայրենիք: Եվ հասարակ բոլոր զինվորները Անդրանիկ, Մոնթե, Գոռ դարձան: Նրանցից մեկն էլ Գևորգն է: Այս տարվա շրջանավարտ էր, հաղթանդամ, ժպտերես մի երիտասարդ՝ գյուղի և դպրոցի սիրելին: Մոտենում էր ամառային զորակոչը: Գևորգը սրտատրոփ սպասում էր: «Հիշում եմ՝ այդ օրը զբաղված էինք առօրյա գործերով, ոչ մի հատուկ բան չկար մինչև հեռախոսի զանգը: Իմացանք բանակ գնալուս մասին, և ես նկատեցի մորս լցված աչքերը: Խոսակցությունների ընթացքում հաճախ էի կրկնում. «Տեսեք՝ ո՞նց եմ ծառայելու»: Իմ ծիծաղն էլ էր գալիս իմ ասածի վրա: Իսկ ո՞վ կիմանար, որ ամեն ինչ այսպես էր դասավորվելու: 18-ամյա եղբորս կյանքի այս մեկ ամիսը տարիների տեղ անցավ:

«Երգելով զորքը դուրս բերեցին զորամասից: Առաջին իջևանը Նորավան գյուղն էր: Մեզ գյուղի դպրոցում տեղավորեցին: Դե, հարմարությունների մասին խոսելն ավելորդ էր. այդ խառը վիճակում ումից ինչ էիր պահանջելու: Առավոտ շուտ արթնացրին, մի քանի օրվա պաշար տվեցին և ուղևորվեցինք: Ամբողջ ճանապարհին երգում էինք՝ իմանալով՝ ուր ենք գնում, չիմանալով՝ ինչ կլինի մեզ հետ, չճանաչելով պատերազմի դեմքը:

Կուբաթլու: Հերթը մերն էր քեզ պաշտպանելու, հայրենի՛ք: Մոտ 7 կմ սողեսող գնացինք, եթե ոչ ավելի: Կարևորն աննկատ մնալն էր: Վերևում «սնարյադների» հոսք էր: Հասանք առաջնագիծ: Մերոնք լավ էին աշխատում, ամեն մեկն իր գործի վարպետն էր: Թեժ մարտեր էին ընթանում: Միանգամից պիտի գործի անցնեինք: Բղավոցներ էին, փնչոցներ, հայհոյանք: Մենք լուռ էինք, բայց և շփոթված: 120 փամփուշտ կրակեցի, և զենքս լռեց, ինչպես լինում է հին զենքով կռվելիս: Դրանք էլ ավելի էին մոտենում: Կռիվը շարունակվում էր: Մենք շրջափակման մեջ ընկանք: Ձենք ունեինք, բայց բանի պետք չէր, երբ որ կռիվը օդում էր: Շուրջս դիակներ էին, վիրավորներ՝ անձնացած դեմքով, արնաշաղախ: Ուրեմն սա է պատերազմը: Ծանոթացանք, ճանաչեցինք իրար, լա՜վ ճանաչեցինք: Կամանդիրի օգնությամբ մի կերպ դուրս եկանք: 6 օր մնացինք այդտեղ: Առաջին երկու օրը ո՛չ հաց կար, ո՛չ էլ ջուր: Քնում էինք խոնավ փոսերում: Խրամատներ էինք փորում ձեռքով ու սվին դանակով: Պատկերացնո՞ւմ եք, քայլեցինք 70 կմ, որպեսզի հասնենք Գորիսի զորամաս: Վիճակ չկար, բայց քայլում էինք: Փախչում էինք մահից, գնում էինք դեպի փրկություն: Հետո իմացանք, որ կռվել ենք հատուկ ջոկատայինների դեմ, որոնք 7-8 տարի պատրաստված զինվորներ էին: 1500 հոգի էին, որոնցից 300-ին սպանել էինք:

Հիշեցի՝ մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ: Հիմա մտածում եմ՝ չեմ էլ գիտակցել, որ սպանում եմ: Պաշտպանել եմ, պաշտպանվել:

Ամեն ինչ ավարտվեց: Հողերն էլ չկան, չկան հազարավոր լույս զավակներ: Զինվորի՝ բարձունքին հասնող մարտական ոգին կոտրվեց: Տրվեց ապագա, որն այնքա՜ն մշուշոտ է: Հրեշտակ դարձածները մեզ չեն ներելու: Մեկ ամսում մի ողջ կյանք ապրած, սեփական վախերը հաղթահարած զինվորը մեզ չի ներելու: Վաղը կվերադառնա Գևորգ Միրզոյանը, նա սերունդներին կպատմի իր պատմությունը, կբորբոքի նրանց ազատատենչ ոգին: Այն Գևորգը, ով արդեն գիտի խաղաղության ու կյանքի իրական արժեքը, կդառնա ու կլինի այն ապագան կերտողը, որտեղ 30 արծաթով

հոգին ծախող հուդաներ չեն լինի: Ահա սա է հերոսացման ճանապարհը, որի համար այսքան թանկ վճարեցինք:

Անի ՄԻՐԶՈՅԱՆ
Մեծ Այրումի միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան

Էդի հետ նահանջ չկա

Քրոջ համար աշխարհում ամենամեծ պարգևը եղբայր ունենալն է: Ու երբ գալիս է ծառայության ժամանակը, պարգևդ մեծ հպարտություն ես համարում և ուրախությամբ ջնջում տունդարձի օրերն օրացույցի վրա: Աստված տվել է ինձ իմ բաժին հպարտությունը՝ իմ էդին: Մենք հարազատ քույր ու եղբայր չենք, բայց արյունակցական կապը մեզ դարձրել է հարազատներ դեռ մանկությունից: Հիշում եմ, թե ինչպես էր մեծ համբերությամբ սովորեցնում ինձ խաղալ ֆուտբոլ, գնդակը կառավարել, որ երկուսով մեծանանք՝ ֆուտբոլիստ դառնանք: Մեր դաժան պարապմունքներից հետո թարխունի լիմոնադ էինք գնում, խմում երկուսով մեկ շշից: Ընկերասեր, բարի, համեստ, հավասարակշռված, կատակասեր, նպատակասլաց ու երազկոտ: Այսպիսին է իմ եղբայրը:

Էդուարդը ծառայության է անցել 2019 թվականի հուլիսի 23-ին Արցախի Ֆիզուլի քաղաքում: Երդման արարողությունը Սուրբ Ամարասում էր: Ծառայության ընթացքում աչքի է ընկել իր կարգապահությամբ և արժանացել պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Ամեն ինչ լավ էր, մինչև այս անհիշյալ պատերազմի սկսվելը: Ու հիմա մարմնիս ամեն մի բջիջով ատում եմ պատերազմ բառը: Ամեն օր աղոթում էի Աստծուն, մոմ էի վառում քեզ համար, որ Աստծո աջը ուղեկից լինի քեզ այդ ծանր օրերին: Լինելով ամենաթեժ կետերից մեկում՝ շատ հանգստությամբ էր խոսում, կարծես ոչինչ էլ չի եղել, կարծես պատերազմ չէ: Ես չէի կարողանում, չէի էլ կարողանա: Ինչքան էլ փորձում եմ լավատես լինել, վախերս երբեմն հաղթում են ինձ, խեղդում հավատս: Պատերազմ է, իսկ պատերազմը լի է կորուստներով: Եղբորս և բոլոր զինվորների շնորհիվ թշնամին իր մաշկի վրա զգաց հայ զինվորի անկոտրում կամքն ու ուժը: Ու չնայած թշնամու զինտեխնիկայի ու մարդուժի ահռելի քանակին, նրանք չեն կոտրվել ու շատերի պես մտածել պարտության մասին:

Եղբայրս տանկիստ է: Զինակից ընկերները պատմում են, որ պատերազմի ժամանակ զորամասից միայն իր տանկն է մնացել: «Երբ ընկերներից մեկի տանկը խփեցին, էդոն, չմտածելով իր մասին, նետվեց առաջ և տանկը պայթելուց վայրկյաններ առաջ փրկեց բոլորին: Այդ պահին չի ենթարկվել նահանջ հրամանին, որովհետև բնույթով այդպիսին է, որովհետև պիտի փրկեր մեր...»: Երբ կրակը դադարում է, զանգում է տուն, որ ծնողները հանգիստ քնեն: Հոկտեմբերի 31-ին զանգ եկավ, բայց էդը չէր...ընկերներն էին: Ասացին, որ դիվերսիա է եղել իրենց դիրքի վրա: Էդոն չկա: Միայն տեսել են էդին ընկած, բայց չեն հասցրել մտնել դաշտ, որովհետև դիպուկահարներն էին աշխատում, ու դիրքն այլևս իրենցը չէր: Երբ դիրքը հետ են բերել, էդը էլ այնտեղ չի եղել: Նահանջել էին:

Չնահանջեց Էդուարդը, մնաց իր դիրքում... Ընկերներից 3-ը տեսածից, ապրածից, էդին անօգնական վիճակում թողնելու մտքից նյարդային ու ծանր վիճակում են այսօր: Վիրավոր ընկերներն էլ դեկտեմբերի մեկին դուրս էին գրվել հիվանդանոցից ու միանգամից եկել Էդոյենց տուն, գրկել մորը հարազատի պես: Աչքերում ու սրտում մի կտոր հավատ պահած՝ հավատացրել են՝ լավ կլինի: Հավատա՞մ: Անորոշությունը մարդուն կրկնակի է սպանում: Ընկերները հիշում են էդի խոսքերը. «Որտեղ ես կամ՝ նահանջ չկա»: Երբ ուզում եմ հաց ուտել, տաք անկողնում հանգիստ քնել, մտքիս միայն եղբայրս է: Առաջին օրը րոպեներն էինք հաշվում: Րոպեները դարձան ժամեր, ժամերը՝ օրեր, օրերը՝ ամիս: Ամեն օր Աստծուն աղերսում ենք, որ մեր հերոսը կենդանի մեզ վերադառնա: Մեզ կենդանի հերոս է պետք, ինձ իմ եղբայրն է պետք: Ուզում եմ հավատալ, որ դու կգաս: Աննկարագրելի կարոտով սպասում եմ...

Նյութը պատրաստ էր տպագրության, երբ գուժեց տղայի մահվան բոթը:

Դիանա ՄԻՐԶՈՅԱՆ
Մեծ Այրումի միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան

Զոհվել է Արամ Խաչատրյանը

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Արամ Խաչատրյանը: Նա երաժշտական կրթություն բաժնի առկա ուսուցման համակարգի ուսանող էր: Բանակ էր զորակոչվել ուսումնառության 1-ին կուրսից:

Արամ Խաչատրյանը Արարատի մարզի Նոր Խարբերդից էր:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողներն իրենց խորը վշտակցությունն են հայտնում Արամ Խաչատրյանի հարազատներին, զինակիցներին ու կուրսընկերներին:

Որ սերունդներին իրար կապող շղթայի օղակներն ամուր մնան

Գոհար ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հրաժեշտի խոհեր

Մեծն Գոհարին մենք հայոց մեծերի Պանթեոն ուղեկցեցինք մայիսյան մի պայծառ օր, երբ լրացել էր նրա կյանքի 83-րդ տարին:

Սա վերջն էր ընդամենը ֆիզիկական գոյության: Մնացածը նույնն է՝ մենք կշարունակենք լսել Գոհար Գասպարյանի փառահեղ կատարումները, կշարունակենք տեսահոլովակներով ու ձայնագրություններով հետայսու էլ հիացական հայացքով ու բարձրաճաշակ երգեցողության կարոտ մեր ունկերով լսել նրան՝ վերստին ու վերստին ըմբոշխնելով նրա զմայլելի ձայնից հորդացող լույսի ճառագումների անմարելի փայլը: Մենք կշարունակենք մեզ հպարտ զգալ, որ մեր քույրը, մեր հայրենակիցը, մեր մեծ հայուհին օպերային արվեստի փառքը աշխարհին բաշխեց՝ այդ փառքի ծիրանին ուսած: Մենք հայրենիքի զգացողության, հայրենիքի հանդեպ խորին սիրո արտահայտության նրա պահվածքը կփորձենք սերտելի դաս համարել անգամ նրա կյանքի այն մեն մի օրինակով, որ 1946-ին աշխարհահռչակ «Լա Սկալա» օպերային թատրոնի հրավերը մերժելով՝ ընտրեց իր հայրենիքի օպերային թատրոնի բեմը: Հետո, ինչ խոսք, նա նվաճեց աշխարհի համարյա բոլոր հայտնի բեմերը, բայց իր բոլոր-բոլոր նվաճումների հենքը պիտի մնար հայրենական բեմը: Այս ցանկությամբ էր Եգիպտոսից եկել Հայրենիք:

Հրաժեշտի նախորդ օրը նրա երգի երկրպագուներս նրա բնակարանում, հուզված ու տրտում, պտույտ արինք նրա ածյունի շուրջ՝ զարմանք ապրելով, թե ազգի պարծանքի հոգեհանգիստն ինչո՞ւ է բնակարանում արվում... Հետո հավաքվեցինք նրա տան բակում, ու, հայոց Մեծ Սոխակին ճշմարիտ սիրող ու ընդունող ամեն ոք մտերիմ մարդուն հատուկ մի յուրովի թախիծ ապրեց՝ հիշելով ու վերապրելով երգչուհու կյանքի վերջին տարիների ապրած մենությունն ու դժվարությունները: Եվ մեր շուրթերին թառած էր ափսոսանքի հարցականը՝ «Գուցե մենք Գոհար Գասպարյանի ֆիզիկական գոյությանն ավելի վա՞ղ էինք հրաժեշտ տվել (Մեղայ Աստծո), երբ նա (ներողությունս հայցեմ դստերը) մենակ էր ու գուրգուրանքի կարոտ հատկապես իր կյանքի ընկեր ու իր անխոնջ խնամակալ Տիգրան Լևոնյանի վախճանից հետո: (Ի դեպ, Տիգրան Լևոնյանն էլ դեկտեմբեր 14-ի ծնունդ է)»:

Ցա՞վ պատճառեցի ընթերցողին՝ մեզ բոլորիս, որ նախկինում էլ վայելում էինք ու դեռ երկար պիտի վայելենք հայ և համաշխարհային երգարվեստի աստղաբույլի ամենափայլուն աստղերից մեկի արվեստի շենշող լույսը: Այդ ցավն ավելի շատ ինձ է կպչում, ու ականջներումս տիկին Գոհարի ձայնն է, երբ ինձ համար մի երանելի օր, երբ իմ գործընկեր Շուշանիկի հետ հարցազրույցն ավարտեցինք, Տիգրան Լևոնյանը մուտքի դուռը բացեց ու ասաց՝ «Ազատ լինեք, դարձյալ անցեք մեզ մոտ»: Գոհարն արձագանքեց. «Մեզ հիմա հազվադեպ են հիշում, Տիգրան»: Արդեն բացված դռան մոտ ես կարկամեցի մի պահ՝ ինչ-որ բան ասել, արդարանալ կամ էլ, ես ի՞նչ իմանամ, ինչ անելս մոռացա:

Հիմա տարիների վաղեմության այդ պատկերն եմ հիշում՝ նախասրահում երկուսով էին, դռան մոտ՝ ես ու Շուշանիկը: Երկու տաղանդավոր մարդիկ, երկու մեծեր, տասնամյակներով իրենց ուսերին արվեստի ծանրության բեռը թեթեւ տարած մարդիկ, այդ պահին մի տեսակ խեղճ ու անօգնական էին թվում մենության տարտամ օրերի մեջ: Անձի գնահատման ինչ չափանիշներ էլ այդ պահին որոնեինք՝ պիտի հնչեին որպես անհարկի մխիթարության սուտ ու փուչ խոսքեր, և անհնար պիտի լիներ դրանք զուգահեռել նրանց այդ օրվա ներանձնության ու տրամադրության անկումի պահերին, նրանց զսպված ու չբարձրաձայնվող ասելիքին՝ «Աշխարհումս մարդուն ամենացավեցնող բանը անտարբերությունն է»:

Տիգրան Լևոնյանն, ավաղ, իրեն «իրավունք վերապահեց» այդ ցավին չդիմանալ, ու դրանից Գոհար Գասպարյանի մենությունն ավելի թանձրացավ:

Եվ մենք...

Եվ մենք՝ անհոգ ու անտրտում, քաղաքական մեր թոհ ու բոհի մեջ, մեր առտնին հոգսերով օր վատնող, անտարբեր մնացինք, որ այնտեղ՝ այդ նեղլիկ բնակարանում, լույսն աստիճանաբար մարում է, ինչպես մոմն է իր լույսը տալով սպառվում: Ու հիմա կմտորենք ու կմտմտանք, կհիշենք Իսահակյանի բնութագրումը՝ «Հայաստանի սոխակ», մակդիրներ կշարենք՝ տաղանդաշատ, անզուգական, հանճարեղ երգչուհի...

Հիմա ի՞նչ՝ համակերպվե՞նք կյանքի բնականոն ընթացքին՝ մխիթարվելով 83 տարիներ ապրելու փաստով: Համակերպվենք, որ երանելի Գոհար Գասպարյանն ավարտեց իր երկրային կյանքը, և այլևս երկնային ճանապարհ ելած փառահեղ երգչուհու, հրաշալի մարդու, հայի լավագույն տեսակի երգարվեստին հաղորդվելու ենք առանց նրա ֆիզիկական ներկայությունը զգալու: Համակերպվենք, որ սոսկ ֆիզիկական բացակայությունից հետո մնացածը նույնը մնա՝ զուլալ, հնչեղ, կախարդիչ ձայնը հաճախակի ունկնդրության պահանջ ու սեր դառնա մեզ համար, որ մեզ համար սովորություն դարձնենք առանձնակի սիրով վերաբերվել մեր ազգի երևելի գործիչներին, որոնք անանց արժեքներ են թողել:

...Տխուր, շատ տխուր էր նաև Մեծ երգչուհուն հրաժեշտ տալը օպերային թատրոնից՝ մեծավ մասամբ այն սերնդի մարդիկ էին, ովքեր նրան լսելու բախտն էին ունեցել: Նրանց կուռքն էր Գոհար Գասպարյանը, ազգային այն արժեքը, որ համաշխարհային երգարվեստի աստղաբույլում իր մնայուն տեղն ունեցավ:

...Երբ երանելի Մարատ Վարժապետյանն իր «Անուշ» ֆիլմում, Անուշի դերում նկարահանելով երիտասարդ դերասանուհու, բացառապես օգտվեց Գոհար Գասպարյանի ձայնագրություններից, շատերի՝ «ինչո՞ւ» տարօրինակ հարցին մի պարզ պատասխան էր տալիս. «Իսկ դու մեկ ուրիշ Անուշ պատկերացնո՞ւմ ես»:

Հրաժեշտի օրը ես սա հիշեցի՝ շարունակ սպասելով, թե բուհերից, երաժշտական ուսումնարաններից, դպրոցներից (կոնսերվատորիան՝ վրադիր) խումբ-խումբ սաներ կգան օպերային թատրոն: Թող որ դա կազմակերպված այց լիներ ոչ միայն Երևանից, բայց այդ կազմակերպված այցի մեջ, համոզված եմ, պարտադրանք չէր լինի, և մեն մի բացատրություն կարդարացներ այդ կազմակերպած այցը՝ «Վերջին անգամ տեսնենք թեկուզ մահճում, իմանանք նրա տեղը հայոց մեծերի Պանթեոնում՝ հետայսու երբեմն-երբեմն այցելելու ցանկությունը մեջներս պահպանած»: Եվ ճանապարհին, Երևանից, թե այլ քաղաքներից ու շրջաններից, դասատուները, դասղեկները, խմբերի ղեկավարները զրույցներ վարեին Գոհար Գասպարյան մեծ երգչուհու, մեծ հայի մասին՝ անձի գնահատման ճշմարիտ չափանիշների որոնման մեջ վանելու մարդուս հիշողության վրա անհարկի, բայց հաճախ եկող այն շղարշը, որ անտարբերություն է կոչվում:

Խումբ-խումբ երեխաներ, խումբ-խումբ ուսանողներ քիչ կային: Ձահելներ քիչ կային: Եվ վախենում եմ, թե անանց արժեքներ թողած մեր ազգի երևելի գործիչների հանդեպ, պակասող հետաքրքրությունն ինչ-որ տեղ վնասի սերունդների ճամփաբաժանը պարզ ու մաքուր պահելու գործին:

Վահան Տերյանի մտորումը հիշեցի՝ կապված Լև Տոլստոյի հուղարկավորության հետ: Բառացի մեջբերեմ. «Իհարկե» թաղման հանդիսությունը և մեծությունը հարկավոր չէր Լև Տոլստոյին: Դա մեզ էր հարկավոր, նախևառաջ և միայն մեզ, որպեսզի մի րոպե ևս դարձյալ հեռանայինք առօրեականից զգայինք նորից և նորից, թե որպիսի ողբերգական և խորհրդավոր րոպե ենք ապրում-որպեսզի դրոշմվեր մեր հոգում այն, որ միացնում է մեզ ամենքիս, այն, որ քարոզում էր Լև Տոլստոյը: Որպեսզի հեռանայինք մեր հոգսերից և առօրեականից, որպեսզի տեսնեինք, որ մենք ընդունակ ենք մեր ուսուցչին հարգելու համար մոռանալ ամեն ինչ-միանալու նրա անվամբ և ապրել նրա ոգու, նրա մտքերի, նրա մեծության լույսի մեջ: Ապրեինք ուրիշ, բարձր զգացմունքների և մաքուր խոհերի աշխարհում:

Սակայն այդպես չէր:

Տոլստոյի թաղմանը չէր մասնակցում ամբողջ Ռուսաստանն իսկ, մինչդեռ պետք է մասնակցեր ամբողջ աշխարհը»:

...Տերյանի մտահոգությունը բերենք-հասցնենք մեզ՝ Գոհար Գասպարյանին հրաժեշտի պիտի գար... ամբողջ աշխարհը: Այո, այդպես պիտի լիներ, և մեր կողքին ապրող մեր ազգի մեծամեծների կյանքը պիտի սերունդների սեփականությունը դառնա մեր այն ցանկությամբ, որ սերունդներին իրար կապող շղթայի օղակներն ամուր մնան:

...Լո՜ւյս քո արդար շիրիմին, մեծն Գոհար Գասպարյան և... շնորհավոր ծնունդդ:

Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ

ԿՈՐՑՐԻՆՔ ՄԵԶ ՀԱՐԱԶԱՏ, ԾԱՆՈԹ ԺՊԻՏՆԵՐ

Մենք շուտ մեծացանք ու շատ մեծացանք, այս անասելի ցավերի մեջ փորձվեցինք ամենախիստ ձևով: Կորցրինք մեզ հարազատ, ծանոթ ժպիտներ: Մենք պարտավորվեցինք ապրել հազարավորների փոխարեն ու նրանց կիսատ թողած երազանքների իրականացման համար: Մեզ բաժին հասավ մահու չափ հպարտություն զգալ անդադար տանջանքի հետ մեկտեղ:

Մենք միասին ենք մեծացել: Շատ ենք խաղացել, շատ ենք նեղացել ու նեղացրել իրար:

Բայց չէ՞ որ այդ մանկությունն այնքան արագ է անցնում, որ մի պահ հասկանում ես՝ մեծացանք: Ես դա զգացի, երբ Նարեկ Շուշանյանն էլ մեզ հետ չէր ֆիզիկապես:

Նարեկ Շուշանյան: Քաջ, խիզախ, վեհ մի անձնավորություն, ում մասին թերևս (առհասարակ՝ ՆՐԱՆՑ մասին) անցյալով խոսել ուղղակի չի ստացվում, քանի որ նրանք դարձան մեր ապագան կերտողները:

Նարեկը ժամկետային զինծառայող էր, պատերազմի առաջին իսկ օրերից առաջնագծում է եղել ընկերների հետ, շրջափակման մեջ էին ընկել, բայց ուժեղ կամք կար նրանց բոլորի մեջ՝ երբեք չնահանջել… Շրջափակումից հրաշքով փրկվել է:

Հերթափոխի ժամանակ հրամանատարն իր զինվորներին հարցրել է, թե ով է ցանկանում կռվի դաշտ վերադառնալ, ով չի վախենում, ով է պատրաստ մահու- կյանքի պայքար մղել:

Նարեկն առաջինն է եղել, որ վերադառնալու պատրաստակամություն է հայտնել, նա առաջինն էր, որ չի վախեցել և ընդառաջ է գնացել մահվան վտանգին:

Չվախեցավ, որովհետև գիտեր՝ հաղթելու է, ու իր կերտած արշալույսներով տուն է դառնալու:

Մարտական գործողությունների ժամանակ ընկերը վիրավորում է, Նարեկն առանց վայրկյան անգամ մտածելու ընդառաջ է գնում՝ ընկերոջը դուրս բերելու կրակահերթերի տակից: Չնայած բոլորը նրան ետ էին կանչում, խնդրում, որ չգնա, որ մի փոքր էլ սպասի: Բայց, ա՜խր, նա ինչպե՞ս կարող էր: Նարեկը միշտ օգնության ձեռք է մեկնել, ոչ մեկի կողքով երբեք անտարբեր չի անցել:

Բայց այս անգամ, ավա՜ղ, նրա կյանքը պահանջվեց, որպեսզի ընկերն ապրի: Ու Նարեկն, այս ամենը գիտակցելով, փրկեց վիրավոր ընկերոջը, փոխարենն ինքը խառնվեց մայր հողին, միացավ հայ անմահների բանակին: Նարեկը հավերժ փակեց աչքերը, փակեց՝ հանուն նոր բացվող աչուկների, հանուն այն արշալույսների, որ ինքը չհասցրեց տուն տանել, հանուն իր ընկերների, հանուն հայրենյաց:

Իրականում դեռ չենք հավատում, դեռ մեր աչքը ճամփին է, բառեր չենք գտնում ՝ ասելու քրոջդ… Համակերպվելն անչափ դժվար է: Դժվար է, երբ հիշում ես քո մանկությունը՝ լիարժեք ուրախ, ու այսօր, երբ էլ չկա մանկությանդ մասնիկը, հիշելն այլևս ցավալի է դառնում: Եվ Հերոս բառի այլ բնորոշում չկա մեզ համար. Հերոսը դու ես, Նարեկ: Հերոսը դո՛ւ ես, որ որոշեցիր չտեսնել այն ցավը, որ մենք ենք տեսնում, ապրել այն խորը դատարկությունը, որ մենք ենք ապրում:

Դու Հերոս ես քո անմար ժպիտով,
Քո՝ երկնքի պես կապույտ ու խաղաղ աչքերով,
Մեր Հերո՛ս Նարեկ, հպարտ ենք քեզնով,
Պարտական ենք քեզ մեր ապրած կյանքով,
Նար, մեզ հետ ես միշտ, հավերժ, հավիտյան,
Չե՛նք մոռանա քեզ, Հերո՜ս աննման:

Աննա ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Լուսինե ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ 50-ՐԴ ՀԱՄԱՐԸ

Լույս է տեսել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հայագիտական հանդեսի» 50-րդ համարը:

«Յուրաքանչյուր պարբերականի ծնունդն ու շարունակականությունը բուհական գործընթացների արդյունավետ իրականացմանը նոր ընթացք են հաղորդում՝ գիտական վերլուծությունների նոր ու հետաքրքիր բացահայտումներով: Այդ տեսանկյունից «Հայագիտական հանդես»-ը՝ ի դեմ գլխավոր խմբագիր Մարտին Գիլավյանի, իր ուրույն տեղն է գրավում Մանկավարժական համալսարանի հրատարակվող պարբերականների շարքում»,- շնորհավորական խոսքում գրել է ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը:

«Հայագիտական հանդես»-ի Լեզվաբանություն, Գրականագիտություն, Պատմություն, Մշակույթ, Մանկավարժություն և մեթոդիկա բաժիններում զետեղված հոդվածներն աչքի են ընկնում հեղինակավոր գիտնականների նոր ասելիքով ու մոտեցումներով, որոնք միտված են ընթերցողների լայն շրջանակներին ծանոթացնելու հայագիտության արդի զարգացման նորություններին:

Շնորհավորում ենք համալսարանական պարբերականի խմբագրակազմին՝ հոբելյանական 50-րդ համարի հրատարակման առիթով: Այսօր ավելի քան պետք է հայագիտական ոլորտի զարգացմանը մոտենալ նոր հայացքով և նոր ասելիքով, ինչը մեծ նախանձախնդրությամբ անում է «Հայագիտական հանդես» պարբերականի խմբագրակազմը:

Թերթելովանցյալիէջերը

ՄԵՏԱՔՍԵ

(հայ բանաստեղծուհի, գրող, արձակագիր, թարգմանիչ և հասարակական գործիչ, ՀՊՄՀ շրջանավարտ)

Ամեն մարդու մեջ կա մի արարիչ,
Բայց քանի՜ մարդ կա ամեն մարդու մեջ...

Վեհ, նուրբ ու կանացի կերպարը ներկայացնող այս հայուհին՝ Մետաքսե Սերոբի Պողոսյանը, ծնվել է Արթիկի շրջանի Եգանլար գյուղում (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Արևշատ գյուղ) 1926 թ. դեկտեմբերի 23-ին:

Մանուկ հասակում որբացել է և մեծացել Գյումրու մանկատանը: 1952 թ. ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, 1958 թվականին՝ ԽՍՀՄ Գրողների միությանը կից Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտը:

Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտն ավարտելուց հետո որպես նավաստի է աշխատել «Լիպեցկ» շոգենավում, որով եղել է Եգիպտոսում և Ալբանիայում:

1948 թ. եղել է ԽՄԿԿ անդամ, 1963 թ.-ից՝ Հայաստանի գրողների միության անդամ, 1989-1991 թթ.-ին՝ Հայաստանի Մայրության հիմնադրամի փոխնախագահ:

1992-1995 թթ.-ին Հայաստանի գրողների միությունում նա ստեղծել է Արցախի ազատամարտիկներին օգնող հանձնախումբ՝ իր նախագահությամբ, որը համաժողովրդական աջակցություն եղավ Արցախին:

Որպես Հայաստանի Մայրության հիմնադրամի փոխնախագահ՝ 1988 թ. աղետալի երկրաշարժից հետո Գյումրիում և Սպիտակում օգնություն է կազմակերպել միակողմանի և երկկողմանի որբերի համար:

2006 թվականին Շիրակի մարզի Արևշատ գյուղի դպրոցն անվանակոչվել է Մետաքսեի անունով:

Իր ապրած տարիների ընթացքում բեղմնավոր ստեղծագործական ուղի է ունեցել Մետաքսեն: Նա երեք տասնյակից ավելի գրքերի հեղինակ է, որոնցից են՝ «Զգույշ, սիրտ է», »Սերը հավատ է», «Արցունքները չեն ծերանում», «Հազար ու մի սեր», «Երբ ես գալու, Տեր» և 1995 թվականին հրատարակել է «Շամիրամ» պոեմը: Մանկական գրքերից են «Մաքրասեր Լիլիթը», «Լիլիթը և բադիկները», «Աչիկի և Վաչիկի զրույցը», «Ճստիկը» գրքերը: Մետաքսեի արձակ էջերից են նաև «Հովհաննես Շիրազը իմ հուշերում» և «Պարույր Սևակն իմ կյանքում» հուշագրությունները: Մոսկվայում ռուսերեն լեզվով հրատարակվել է «Ճակատագիր», «Կյանքի գրկում», «Հազար ու մի սեր» գրքերը:

Կազմել է «Դափնեպսակ Չարենցին» բանաստեղծությունների ժողովածուն (առաջաբանը՝ Արփենիկ Չարենցի, ՀԳՄ, 2011):

Մետաքսեի երկերը թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, մակեդոներեն և այլն: Մետաքսեն թարգմանել է ռուս բանաստեղծուհի Բելլա Ախմադուլինայի «Բանաստեղծություններ», սլովակ Միրոսլավ Վալեկի «Հեռավոր հանդիպում», ռումին դասական Թուդոր Արգեզիի «Խորհրդավոր սաղմոս» բանաստեղծական գրքերը և մակեդոնացի Սլավկա Մանևայի «Ձիջի» մանկական պատմվածքների գիրքը: Նա մասնակցել է պոեզիայի միջազգային մի շարք փառատոնների և իր ստեղծագործություններով բարձր պահել հայ պոեզիայի հռչակը:

1985 թվականին ԽՍՀՄ գրողների պատվիրակության կազմում Մետաքսեն եղել է Իտալիայում և Սիրակուզա քաղաքի «Լացող Տիրամայր» հյուրանոցում, արժանացել է Աստծո տեսիլքին, որը ներշնչել է բանաստեղծուհուն Հայաստան վերադառնալուց հետո գրել «Ամենափրկիչ», «Հովհաննես Մկրտիչ» և «Աստծո տեսիլք» պոեմները, որոնք առանձին գրքերով հրատարակվել են հայերեն և անգլերեն լեզուներով: 2003 թ. Մետաքսեն այդ պոեմներն ուղարկել է Վատիկան, Հռոմի Պապ, Հովհաննես Պողոս Երկրորդին՝ նամակում պատմելով Սիրակուզայի տեսիլքը: Պատասխան նամակում Հռոմի Պապը գրել է, որ իր աղոթքների մեջ հիշելու է բանաստեղծուհու անունը և «Աստծո օրհնանքները շռայլորեն ցողում է նրա վրա»:

1990 թ. Նյու Յորքում հրատարակված «Բոլոր դարերի ու ժամանակների բանաստեղծուհիները սիրո մասին» հատընտիրում տեղ է գտել Մետաքսեի «Գաղտնիք չի մնում» բանաստեղծությունը: Երեք հազար հեղինակներից ընտրել են հարյուր յոթ անուն և այդ հարյուր յոթից ընտրել տասնչորս բանաստեղծուհիների, որոնց անունները տեղադրել են գրքի շապիկի գովազդային էջում: Մետաքսեն աշխարհի չորս կին մեծագույն բանաստեղծուհիներից մեկն է՝ Սաֆո, Աննա Ախմատովա, Էմիլի Դիկենսոն, Մետաքսե… Գրքի առաջաբանում գրող, հրատարակիչ Ուենդի Մըլֆորդը գրել է. «Մետաքսեի բանաստեղծությունը ընդհանրացնող մեծ ուժ ունի»:

Արժանացել է մի շարք պարգևների, որոնցից են «Զորավար Անդրանիկ», «Հայոց ազգային բանակ», «Գրական վաստակի համար» մեդալները, «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանը: 2008 թ. ՀՀ կառավարությունը արժանացրեց նրան կառավարական պարգևի «Մովսես Խորենացի» մեդալի: 2011 թ. դեկտեմբերի 23-ին Հայաստանյաց առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կողմից Մետաքսեն պարգևատրվեց «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատվո շքանշանով: 2017 թ. Շիրակի մարզում պաշտոնապես կայացավ «Մետաքսեի պոեզիայի օրեր» փառատոնը, որն անց է կացվում ամեն տարի, և մասնակիցներին պարգևատրում են այդ օրվան նվիրված պատվոգրերով, շնորհակալագրերով (Մետաքսեի նկարով) և կրծքանշանով:

2003 թ. Արցախի համալսարանի դասախոս, բ.գ.թ. Սիլվա Միհասյանը գրել է «Մետաքսեի աշխարհը և լեզուն» գիրքը, որը նվիրված է Մտաքսեին:

2006 թ. լույս է տեսել Մետաքսեի հեղինակած «Ճակատագրական կինը» գիրքը, որտեղ տեղ են գտել բանաստեղծուհու մասին հոդվածներ, նամակներ, կարծիքներ, բանաստեղծություններ, ինչպես նաև նրա գրական գործունեության կենսամատենագիտությունը (1948-2004 թթ.), որը կազմել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Արմինե Հակոբյանը:

Նշենք նաև, որ Մետաքսեն քսանից ավելի երգերի խոսքերի հեղինակ է, որոնցից են «Կռունկներ», «Ամեն մի կին» և ուրիշներ:

Մետաքսեն մահկանացուն կնքեց 2014 թվականի օգոստոսի 10-ին Երևանում և թաղված է քաղաքային պանթեոնում:

Մետաքսե

ԱՄԵՆ ԳԻՇԵՐ

Ես մեռնում եմ ամեն գիշեր
Վերածնման նոր հույսերով,
Դեռ մեռնում եմ մահով անմեռ,
Եվ այդ մահս երազ է ծով...
Բայց աշխարհը նույնն է մնում,
Մեռնող ամեն արցունքն է ցող,
Մեռնող ամեն գիշերն անհուն՝
Առավոտ է շողշողացող:
Նույնն են մնում աստղ ու լուսին,
Ես էլ նույնն եմ մնում կարծես,
Միայն ինչ-որ մեկն իմ մասին
Աստղերից է շշնջում քեզ,
Թե աշխարհում դեռ կա՛ մի կին,
Որ մեռնում է ամեն գիշեր,
Եվ համբարձված նրա հոգին
Շաղ է տալիս աշխարհում սեր...

ՀՊՄՀ ԹԱՆԳԱՐԱՆ



ՄԵՋ ԲԱՑԱԿԱ ՉԴՆԵՔ

ՀՊՄՀ վարժարանի աշակերտները դեկտեմբերի 21-ին Մանկավարժական համալսարանի սրահում կազմակերպել էին հուշ-միջոցառում՝ նվիրված Արցախի դեմ սեպտեմբերի 27-ից սանձազերծված 44-օրյա պատերազմում զոհված քաջորդիներին: Միջոցառման մուտքը աշակերտները բացեցին ասմունքով, դասական երաժշտությունով ու երգի կատարումներով: Ապա մեկ առ մեկ հիշեցին ոչ միայն վարժարանի զոհված ուսանողներին ու շրջանավարտներին, այլև վարժարանի ուսուցիչների և աշակերտների ընտանիքների զոհված անդամներին, նաև՝ Մանկավարժական համալսարանի 22 զոհված ուսանողներին և շրջանավարտներին: Տխուր էր, շատ տխուր, համակ թախիծն էր սրահում տեր ու տնօրենը. ո՛չ բառերն էին կարող մեղմել հոգու ցավը, ո՛չ էլ «Կռունկ» երգի հնչյունները…

Տեսանկարներից ներկաներին նայող տղաների հայացքներն էին՝ ժպտացող, հուսադրող ու հորդորող՝ մեզ բացակա չդնեք…

«Հայաստան աշխարհում համազգային սգո օրեր են: Մեր եռագույնն արդեն երրորդ օրն է՝ իջեցված է, մեր հոգին՝ ալեկոծված, տխրությունն ու ցավը պատել են մեր սրտերը, որովհետև… տղերքը չկան,- իր ելույթն այսպես սկսեց վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը, ով բազում առիթներով ուրախ ու ժպտացող հայացքներով շրջանավարտների է ճանապարհել դեպի կյանք, իսկ այսօր… Այսօր կոկորդը սեղմող թախիծով հայտարարում է՝ մեկ րոպե լռությամբ հարգենք զոհերի հիշատակը:-Ազգի իսկական նվիրյալներն այս տղերքն են, որ հանուն հայրենիքի հավերժացան: Վարժարանի մեր փոքր ընտանիքը ևս մեծ կորուստներ կրեց՝ Տիգրան, Ազատ, Հայկ, Լյուդվիգ, Մխիթար, Կարեն, Գևորգ, Դավիթ… Նրանք վարժարանի շրջանավարտներն են, աշակերտներ Լիլյա Թունյանի, Կարեն Հարությունյանի, Մերի Աղջոյանի և ուսուցիչներ Վարդուհի Հովհաննիսյանի, Վանուհի Բաղրամյանի և Էլեն Մուրադյանի հարազատներն էին՝ եղբայրներն ու հայրերը:

Երախտապարտ ենք մեր լույս ընկերներ, եղբայրներ, հայրեր…ներեք մեզ, ուժ ու ոգի տվեք եռագույնը սևից ազատելու:

Սիրելի աշակերտներ, Արցախյան հերոսամարտին իրենք կյանքը նվիրած մեր նահատակները Եռաբլուրի բարձունքից պարտադրում են, որ չկորցնեք զգոնությունը, որ ինչ պատերազմ էլ պարտադրեն՝ չպարտվենք և ամուր պահենք մեր սուրբ Հայրենիքը: Մենք պարտավոր ենք և պետք է նաև մեր կրթությամբ և գիտելիքներով հաղթենք: Փառք ու պատիվ նաև Հայոց բանակի մեր բոլոր զինվորներին, ովքեր այսօր էլ շարունակում են պատվով կատարել իրենց առաքելությունը, վիրավորներին՝ շուտափույթ ապաքինում, գերիներին և անհայտ կորածներին էլ՝ շուտափույթ վերադարձ»:

Վարժարանի տնօրենը շնորհակալություն հայտնեց աշակերտներին, որոնք այդ օրերին թիկունքն ամուր պահեցին և ամենատարբեր աշխատանքներով աջակցեցին բանակին: Տնօրենը նրանց շնորհակալագրեր հանձնեց:

Միջոցառման ավարտին վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանն աշակերտներին հորդորեց. «Մեծացրեք ձեր նպատակներն ու երազանքները և ավելի ամուր ու հաստատուն քայլերով գնացեք դեպի դրանց կատարումը»:

Մեր հաղթանակի օրը դեռ գալու է՝ համոզված են տնօրենը, ուսուցիչներն ու աշակերտները: Այդ օրը գալու է՝ գիտելիքների հանդեպ բոլորի ջանադիր պահվածքով ու Հայրենիքի շենացմանը նպաստող նախանձախնդիր արարումներով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ

«Գեղեցիկը տեսնողը մասնակից է նրա արարմանը»

Քրիստիան Բոուվի



Սկզբնական կրթության ֆակուլտետի լավագույն ավանդույթներից է ուսանողների աշխատանքների ամենամյա ցուցահանդեսը: Այս տարին էլ բացառություն չէր: Կերպարվեստի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ժաննա Խաչատրյանի նախաձեռնությամբ ու ջանքերով Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսն այս տարի կազմակերպվեց առցանց տարբերակով:

Ուսանողները ներկայացրել էին իրենց ստեղծագործական աշխատանքները կերպարվեստի տարբեր տեսակներից՝ բնանկարներ, նատյուրմորտներ, ծեփակերտման աշխատանքներ, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում և գրավում իրենց մտահաղացմամբ և յուրահատուկ գույներով:

Ցուցահանդեսում ներկայացվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի տարբեր կուրսերի ուսանողների՝ «Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի շրջանակներում ստեղծած աշխատանքները:

«Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի շրջանակներում ծնվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք կատարվել են ինչպես հեռավար հարթակում գործնական պարապմունքների ժամանակ, այնպես էլ ուսանողների՝ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին: «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողուհի Զուլիետա Մանուկյանը, որը մեծ համբերատարությամբ և սիրով կատարել էր ոչ միայն իր ստեղծագործական աշխատանքները, այլև ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ցուցահանդեսի կայացման գործընթացում, իր ֆեյսբուքյան էջում նշել է, որ բոլոր դժվարին պահերին կերպարվեստը բացում է իր դռներն այն մարդկանց առջև, ովքեր սփոփանքի կարիք ունեն, և սովորեցնում է տեսնել, զգալ և գնահատել գեղեցիկը:

Այսօր, ժամանակի պահանջով, կյանքի դժվարությունները և հուզական վիճակը հաղթահարելու, կարգավորելու միտումով կերպարվեստի գործնական դասաժամերը դարձան առավել կարևոր: Ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն ընդգրկվեցին ստեղծագործական գործունեության մեջ և կերպարվեստին հատուկ լեզվով խոսեցին իրենց մտորումների, հույզերի ու զգացմունքների մասին:

Սկզբնական կրթության ֆակուլտետի շրջանավարտները, ապագա մասնագետները պետք է աշխատեն երեխաների կրթության և զարգացման ուղղությամբ, իսկ կերպարվեստն իր տեսակներով լավագույն հնարավորություն է՝ բացահայտելու երեխայի յուրօրինակ անհատականությունը և ներաշխարհը, արտահայտելու սեփական տեսակետը, այն երեխայի «Ես»-ի արտահայտման և հաստատման յուրահատուկ ձև է:

Ինչո՞ւ ես փխուր և ինչո՞ւ ես ուրախ

Ինչու՞ ենք այդքան հավատարմությամբ ամեն Ամանորին հիշում «Երնեկ թե այս Նոր տարին վերջ տար հայի ցավերին…»: Ամեն Ամանորի մեր երազանքը նու՞յնն է:

Հիմա ավելի քան երազանք է, աղոթք, որ բարին բույն դնի մեր սրտերում:

Մեր ներս ու դրսի սահմանները խախտվեցին: Մեր անհոգ թափանցիկ օրերը ալեկոծվեցին:

Մենք շոշափում ենք մեզ՝ զգալու մեր մարմինը տեղու՞մ է արդյոք: Մեր ձեռքերը կան. զենք ենք բռնել: Մեր ոտքերը կան. վազում ենք փրկելու ընկերոջը: Մեր գլուխը կա. գիտակցված մահվան ենք գնում: Մեր սի՞րտը:

«Հայաստանը դեռ կա՞, իր տեղո՞ւմ է:

Հայաստանը կար, պարտավոր էր լինել, որովհետև որդին ահա հիվանդացավ հայրենախտով: Տեր աստված, տեր աստված… աշխարհում հազար տեսակի ցավ ու հազար էլ դեղուճար կա, իսկ լակոտն ահա հիվանդացավ հայրենախտով»,- ասել է Հրանտ Մաթևոսյանը մի թափանցիկ օրվա դարե պատմություն վավերագրելիս: Մեր չբուժվող հիվանդության դարմանը պիտի գտնե՞նք:

«-Դու մի ժամանակ ուզում էիր Անի գնանք:

- Ա՜, շատ բան էի ուզում»:

Էդ շատը շատացրինք:

Սահմանները քարտեզագրելուց առաջ մեր ներսը, մեր հոգու սահմանները մի քանի անգամ սևագրեցինք, գծագրեցինք: Չստացվեց. մեր հոգին, մեր սիրտը սահմաններ չեն ճանաչում: Մեր սիրտը լեռներում արծվային թռիչքների է սովոր: Միայն մի պահ եկավ, իջավ մի բլրի վրա՝ Եռաբլուրի՝ այնտեղ փնտրելու սահմանից այն կողմ թողածը:

Մեր՝ փյունիկվելու չհոգնող տեսակը նորից արարելու կամք ու ուժ գտնելու է: Հ. Մաթևոսյանն ասում է. «Մեսրոպ Մաշտոց աստվածը, որ ասաց. «թող լույս լինի» և լույս եղավ»:

Մեր տղաները ասել են, որ հաղթանակը լինելու է: Ուրեմն կորցրել ենք, բայց ամեն ինչ չէ, որ կորած է: Իրենց պահածը պաշտպանելու, ծաղկեցնելու մեծ պարտք ունենք տոնական կենացների փոխարեն:

Ամանորից վայրկյաններ առաջ կամփոփենք տարին, կմխա մեր սիրտը, կխեղդվի արցունքը, մրմուռը կպատի մեզ ներս ու դրսից: Ամանորյա զանգերը ջանք չեն խնայի մեզ նորը ազդարարել ավելի բարձր, քան արկերի ձայնն է եղել, ավելի համոզիչ:

Պետք է հավատանք, ոչ թե որովհետև չկա այլընտրանք, այլ որովհետև բոլոր ճանապարհներից դա ենք ընտրելու՝ ուժ գտնելով կատարել ամեն մեկիս խոստումը տղաների առաջ:

«Ջորի Միրոն» նայեցինք. հողը շնչում էր և՛ սկզբում, և՛ վերջում: Իմ աշակերտ Ավետիսն ասում է. «Սպասող հողերին հետ բերելիս ազգովի պիտի ֆիդայինի երդում տանք, ընկե՛ր Բաղրամյան»:

Եվ ես հիշեցի՝ Ավետիս նշանակում է բարի լուր բերող:

Մեր բարի լուրը սա է երևի:

Հետո մենք մեր դասարանական խումբը վերանվանեցինք ԱՍԱԼԱ: Հետո մտածեցինք մարդ սպանելու սարսափելիության ու «անհրաժեշտության» մասին:

Իսկ ես իմ աշակերտների համար գարնան ու սիրո մասին ոչինչ չկարդացի այս տարի:

Ձյուն կգա, կմաքրի արյունը դաշտերից, կծանրանա մի քիչ, մեր ոտքերը կխրվեն ձյան մեջ, կդժվարանանք քայլել: Չե՞նք սիրի էլ, ցորենը չի՞ ծփա, պատարագ չի՞ մատուցվի:

Իրարամերժ մտքեր են մեր գլխում, քաղաքում հայրենիքում. «…Ինչո՞ւ ես տխուր և ինչո՞ւ ես ուրախ»:

Ամանորն անխուսափ է դարձնում երազելու ուժը:

Հետո հալոցք կլինի, ես գարնան մասին բանաստեղծություններ կկարդամ իմ աշակերտների համար, ու կսիրենք էլի:

Վանուհի ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ, վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 26.12.2020 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ